

տաղու թենէն առաջ եկած էր . 'ի վե-
րայ այսր ամենայնի այլ և այլ կողմնա-
կցութիւնները առիթ առին այս դի-
պուածէս իրարու վրայ ամբաստանու-

թիւններ ընելու , ու մէկզմէկ դործա-
կից ու գրգռիչ ցուցընելու Տամիանի :
Ըսանկ կը հանդիպի քաղաքական կիր-
քերու գրգռութեանը ժամանակ :

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Գ Ե Թ Ս Ե Մ Ա Ն Ի

Կեղեալ հոգւոյս ապաւինի վայր անբոյժ ,
Ղաթսեմանէ՛ , իցէ՞ այլուր քան ըզբոյդ .
Ըստուածային ով դու կայան հաճոյից ,
Ընդ հանգիցէ մարդ ի յուզմանց եւ ի կրից .
Ըզբո կամիմ եւ ես այսօր զանդոյր հեշտ ,
Հոգոց կենաց տըւեալ գէթ վայր մի հրաժեշտ :

Սիրտ , թէ կամիս ի լռութեան յապահով
Բանալ զոգւոյդ անձուկ եւ տալ տապոյդ հով ,
Կամ ի մեղաց զերծ խընդրես քեզ կայս օտար ,
Ի նա զհոգիդ ի թեւս եգեալ մրտաց՝ տար .
Սիրայնութիւն՝ կենաց ընկեր անվըկանդ ,
Ըստուածորդւոյն իսկ ետ յաճախ համբոյր անդ :

Վանիցս Յիսուս թափել ըզխոնջն անձանձիր ,
Կամ ըզմոլար խոկալ գառինս ցան եւ ցիր ,
Եւ կամ ըզխիստ յիշել ըզխաչ կենսազէն ,
Յոր սիրավար գիմեաց առ հայր լինել զէն ,
Իբրեւ ըզմարդ ի խորհըրդոց ծուփ յալիս
Լըռիկ մէնիկ անդ իւր արար ճեմելիս :

Եւ մերձ ընդ մերձ ընդ ծառոյ զով ըստուերաւ
Երթայր նըստիլ , եւ պարն ընտրեալ շուրջ զիւրեաւ՝
Խորատուց բանիցըն սուրբ շըրթանց մեղըմանու
Յակճիւս կային ճըմլեալ սըրտիւ եգեալ ուշ :
Կամ էր զի բարձ գործեալ ծընդաց ըզլայն քար ,
Սասըն մարդկան առ հայր լինէր աղօթկեար :

Ո՛հ վայր սիրոյ , զոր սիրեաց սէրն Ըստուծոյ ,
Սիրեմ եւ ես առնուլ դադար ի ծոց քոյ .
Սեղմեա զհոգիս լըկեալն հողմով հիւսիւսի ,
Ի սիւքդ անոյշ խառնեալ ի շունչն Յիսուսի .
Լըռեացէն ինձ կենցաղոյս բարբաջանք ,
Օ՛ականջս իմ տաց սիրոյդ եւեթ յարձագանգ :

Ում ոչ զըտաւ բարձ՝ ուր զընէր ըզգըլուիս ,
Եւ վայր աղատ ի մտխանաց հըէից թուիս ,

Հաճոյ եղեր միայնութեամբդ լըռիկ ,
Եւ ըզբօսանք եղեն նրմա քօ հերիք .
Եւ որ յԼճին ճեմէր ազատ ընդ մարդոյն ,
Լճդ ընդ նրժդէ՛հ մարդկան ի քեզ ճեմի նոյն :

Յայս մըրցեցաւ սահման Հրէից չարաթոյն
Հեռ նախանձու եւ սուրբ սիրոյն մեծութիւն
Ո՛հ , զոր գիշեր յիմ կոչեցի յիշատակ .
Սայր դու հեշտին , եղեր եւ վայր դժբնդակ .
Վաղցըր կենաց դառն շըրջանն երբ լըցաւ՝
Յիսուս զիմեաց ի ճեմելիսդ իւր ի ցաւ :

Պամ քան ըզգամ երկայնէին ձիգ ըստուերք ,
Եւ ամենայն ինչ հանգըստեան տայր հրաւերք .
Եւ Յիսուսի համայն թըւի անհամբոյր .
Սիրան է յուզեալ , դառն է նրմա պահն ընդոյր ,
Եւ կըրկնէ . Տըրտում է անձն իմ ցըմահ .
Սիրով կալեալ մոռանայ զճետ իւր եւ զգահ :

Եւ ի թըւի մոռանալ զինքն իսկ Լստուած՝
Սիրով վառեալ շըփօթելով ընդ հաստուած .
Յաշակերտացըն խումբ խընդրէ օգնական ,
Եդբա զբազուկըս բարձ գործեալ ի քուն կան .
Հաճ՝ այլ տըկար յուժն դառնալի բաժակին՝
Կամի ժըխտել , այլ սէր յաղթէ զայս յետին :

Նանրաթախիծ տակաւ պատեալ շուրջ խաւար՝
Ըլլաղեմայ ունի անլոյս ըզպատուար .
Եւ եւ լուսնակ ի սուգ՝ ածէ զգիմօք քօղ ,
Ի մախալից միտս Հրէից չիք եւ մի շող .
Ընդ մըթութեան գիշերադէմն եւ Յուդաս
Յառաջ վարէ ի լոյս ջահից ըզխուժ դաս :

Տեսէք , խորհուրդք իմ , Յիսուսին ըզվիճակ .
Հարեալ ընդ քիրտն յարեան ներկեալ ի վիժակ ,
Յորմէ սքօղին հրեշտակք թեւոց ի ծածկոյթ՝
Ի ժպիրհ համբոյր մարդոյ մատնի՝ ձեռս անգութ ,
Պանի , կուփի դատապարտի՝ մահ խաչի .
Լստուած է սա , վասըն մեղաց մեր խաչի :

Իբր իցէ քեզ , Պեթսեմանի , ոչ սուղիլ
Օ Լստուածորդւոյն արբեալ զարեան ըզկաթիլ
Եւ մի . երկիրդ ըզսուրբ արեանն առեալ ջամբ ,
Եր կենաց ծառ ծընցէ , ուղէչք բարձունք ցամբ ,
Եւ անարգել ճաշակեսցէ անհնազանդն
Լխտացելոյ սըրտին ի բոյժ անհիւանդ :

Տես տես, Յիսուս, ապառաժուտ քիմ սրբորին՝
Յիշատակաւ սոցա՝ մասունք խրլըրտին .
Դամ է, ի թափ ուժոյ սիրոյդ եւ դու հար ,
Հարթեա՛ կազմեա՛ քոց քաջաբոյս սերմանց յար .
Լըբգականս տապեալ նեղէ զիս խորշակ ,
Պասքեալս ի քէն հայցեմ արբումն ախորժակ :

Ղախ դու զոգիս, եւ տար ճեմել յայն պարտէզ .
Ինձ հանգիստ եւ բերկրութիւն գոն ընդ քեզ .
Պապեալ սիրով՝ կաց ընդ իս յայն անքոյթ կայս .
Լը ժըխտեսցես անարժանիս զիմորդ զայս ,
Սինչ քեզ պատճառ խոնարհելոյ ի վերուստ
Լը մըտանել յայս պարտէզ՝ մերս էր կորուստ :

ՅՈՎՍԷՓ ԵԱԶԸՃԵԱՆ
Աշակերտ Ռաֆ . Վարժարանի

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Փոնգալէն ետքը քարեկոշ սովորութեանը վրայ:

Հաւանական է որ փոնգալէն ետեւ բարեւելու ընդհանուր եղած սովորութիւնը՝ սկիզբն ունենայ հին աւելորդապաշտութիւններէ . բայց ամենայն իսկ մէջ ալ հետաքննութեան պատճառ եղած է ասիկայ :

Սմանք այս սովորութեան սկիզբը Ս . Ղրիգոր սրբազան քահանայապետին հրամանին կու տան, որ հաստատեց կ'ըսեն համառօտ օրհնութիւն մը ժանտախտի մը ժամանակ, ուր հիւանդութիւնը փոնգալով կը սկսէր, և շատ անգամ մահուամբ կը վերջանար :

Հրէից ռաբունիք որ ամէն բանի ալ պատմութիւն մը յարմարցուցած են, կ'ըսեն թէ Յակոբ նահապետէն առաջ մարդ մէկ անգամ միայն կը փոքն դար, ու փոնգալէն վերջը կը մեռնէր . և կը հաստատեն թէ այս նահապետը առջինը եղած ըլլայ բնական հիւանդութեամբ մեռնողներուն մէջ . ուստի իրմէ առաջ մարդիկ փոնգալով կը մեռնէին, և անոր համար ասոր յիշատակը ամէն իսկ մէջ ալ հրամայուեցաւ պահուելու, որ փոնգալէն վերջը

առողջութեան մաղթանք մը ընեն :

Ինչուան Լըրիստոտէլ ալ կը յիշէ այս սովորութիւնը, թէպէտ անտեղի հետեւանքով մը՝ թէ փոնգալը աղէկ ոգւոյ նշան մը ըլլայ, որովհետեւ ուրիշ բնական բերմանց համար բարեմաղթութիւն չեն ըներ մարդիկ : Լպուէոս, Պետրոնիոս ու Պլինիոս մատենագիրներն ալ կը յիշեն այս սովորութիւնը, ու անոր հնութեանը կը վկայեն : Լընոյն իսկ Լմերիկայի մէջ ալ այս սովորութիւնս տեսնուեցաւ՝ նոր գըտնրած ատենը : Ուրեմն ըսել է թէ ամէն տեղ կը բարեւեն զմարդ փոնգալուն համար :

() Ուարձալի պատմութիւն մը Ս . Նոմոդաբայի թագաւորներուն փոնգալուն վրայօք՝ կը ցուցնէ թէ ինքնակալ իշխանի մը փոնգալը ինչ պարտքեր կըրնայ դնել ազգի մը վրայ : Երբոր թագաւորը կը փոնգայ, իրեն մօտ եղողները այնպէս բարձր ձայնով կը բարեւեն զինքը, որ դրսի սրահին մէջ եղած մարդիկը կը լսեն, ու իրենց ուրախական ձայները ներսիններուն հետ միացնելով՝ քովի յարկերուն ալ կը լսեցնեն նոյն աղաղակը . հոն եղողներն ալ ձայնը ինչուան փողոցը կը հասցնեն, և անկէ բոլոր քաղաքին մէջ կը տարածուի . այնպէս որ թագաւորին մէկ